ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ-ն ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-27/15 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Hewlett Packard Inc	HPI	HP ProStudio 4 AiO G1i	Hewlett Packard Inc	Սեղանի համակարգիչ՝ ամբողջը մեկում, մոնոբլոկ: Աշխատասեղան համակարգիչ, որի հիմնական համակարգչային հանգույցը և էկրանը ինտեգրված են մեկ կորպուսում: Սարքը նոր է, չօգտագործված և արտադրական փաթեթավորմամբ: Սարքավորումը նախատեսված է գրասենյակային բազմախնդիր աշխատանքային կիրառման համար: Բոլոր հիմնական բաղադրիչները գործարանային ինտեգրված են և համատեղելի միմյանց հետ: Էկրան. Էկրանի անկյունագիծ՝ 23.8 դյույմ:

						Էկրանի տեխնոլոգիա՝ IPS, լայն դիտման անկյուններով և կայուն գունային վերարտադրմամբ։ Բնիկ թույլատրելիություն՝ 1920 × 1080 պիքսել։ Էկրանի հարաբերակցություն՝ 16:9։ Էկրանի մակերես՝ հակափայլ (Anti-Glare)։ Պայծառություն՝ 250 cd/m²։ Գունային ծածկույթ՝ 99% sRGB։ Ապահովում է ցածր կապույտ լույսի արտանետման ռեժիմ՝ աչքերի լարվածությունը նվազեցնող գործառույթ։ Կենտրոնական պրոցեսոր Պրոցեսորը ունի 14 ֆիզիկական հաշվարկային միջուկ։ Հոսքերի քանակ՝ 14։ Առավելագույն տուրբո/բարձրացման հաճախականություն՝ 5.0 GHz։ L3 քեշ՝ 24 MB։ Պրոցեսորը աջակցում է 64-bit հաշվարկներին։ Պրոցեսորը կապահովի ժամանակակից բազմախնդիր աշխատանք՝ գրասենյակային ծրագրերի, վեբ հավելվածների, տեսաժողովների և այլ բիզնես ծրագրերի միաժամանակյա օգտագործման համար։ Արհեստական բանականության հաշվարկային հնարավորություններ Պրոցեսորը

						ունի ապարատային AI հաշվարկների համար նախատեսված առանձին/ինտեգրված հաշվարկային միավոր: AI հաշվարկային կատարողականություն՝ 13 TOPS: AI հաշվարկային ենթահամակարգը կկարողանա արագացնել համատեղելի AI գործառույթները՝ առանց բոլոր հաշվարկները բացառապես կենտրոնական պրոցեսորի վրա կատարելու: Կաջակցվի օպերացիոն համակարգի և համապատասխան ծրագրային ապահովման կողմից AI հաշվարկային հնարավորությունների օգտագործումը: Գրաֆիկական համակարգ Առկա է ներկառուցված գրաֆիկական հաշվարկային ենթահամակարգ: Գրաֆիկական համակարգը կաջակցի Full HD թույլատրելիությամբ էկրանի ամբողջական աշխատանքին: Ապահովում է մեկ արտաքին թվային էկրան միացնելու հնարավորություն: Աջակցում է ժամանակակից տեսանյութերի ապակոդավորումը և

						գրասենյակային մուլտիմեդիա աշխատանքը: Օպերատիվ հիշողություն Օպերատիվ հիշողության ծավալ՝ 16 GB: Հիշողության տիպ՝ DDR5 : Հիշողության արդյունավետ հաճախականություն՝ 5600 MT/s: Հիշողությունը ընդլայնելի է: Առկա է 2 հիշողության բնիկ: Աջակցվող առավելագույն օպերատիվ հիշողություն՝ 64 GB: Ներքին կուտակիչ Ներքին տվյալների պահպանման սարք՝ SSD: Տարողություն՝ 512 GB: Տեխնոլոգիա՝ PCIe NVMe : SSD-ն տեղադրված է M.2 ձևաչափով ինտերֆեյսով: Ապահովում է ներքին պահեստավորման հետագա ընդլայնման հնարավորություն՝ մեկ լրացուցիչ M.2 բնիկով: Ցանցային միացումներ Լարային ցանցային միացում՝ 1 Gbps Ethernet: Միակցիչ՝ RJ-45: Անլար ցանցային կապ՝ Wi-Fi 6E մակարդակի : Wi-Fi ապահովում է 2×2 MIMO բազմաալեհավաքային տեխնոլոգիա: Bluetooth՝ 5.3 : Տեսախցիկ և աուդիո Ներկառուցված տեսախցիկ՝ 5 MP թույլատրելիությամբ: Տեսախցիկը

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ТЕХНОФОРУМ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՎԱՀՏ-ԷԱՃԱՊՁԲ-27/15 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					Միկրոֆոնային համակարգը ապահովում է տեսաժողովների և տեսազանգերի համար բավարար որակի պատկեր: Առկա է տեսախցիկի ֆիզիկական անջատման կամ գաղտնիության ապահովման մեխանիզմ: Ներկառուցված երկակի միկրոֆոնների համակարգ: Միկրոֆոնային համակարգը ապահովում է ձայնի ընդունում տեսաժողովների և ձայնային հաղորդակցության ժամանակ: Ներկառուցված ստերեո բարձրախոսներ՝ ընդհանուր առմամբ 4 W հզորությամբ: Առկա է 3.5 մմ համակցված աուդիո մուտք/ելք: USB և արտաքին միացումներ. ապահովված են հետևյալ միացումները. 1 × USB Type-A, տվյալների փոխանցման 10 Gbps արագությամբ, 1 × USB Type-C, տվյալների փոխանցման 20 Gbps արագությամբ, USB Type-C պորտը ապահովում է 15 W հզորությամբ արտաքին սարքերի սնուցման հնարավորություն, 1 × HDMI մուտք՝ արտաքին տեսաազդանշանի աղբյուրի միացման համար, 1 × HDMI ելք՝ արտաքին մոնիտոր/էկրան

						միացնելու համար, 1 × RJ-45 Ethernet, 1 × 3.5 mm աուդիո միակցիչ: Օպերացիոն համակարգ. Նախապես տեղադրված օպերացիոն համակարգ՝ Windows 11 Pro 64-bit: Օպերացիոն համակարգը ապահովում է կազմակերպության կենտրոնացված կառավարման, օգտագործողների և անվտանգության քաղաքականությունների կիրառման հնարավորություն: Աջակցվում է ժամանակակից ապարատային վիրտուալիզացիան և անվտանգ բեռնման մեխանիզմները: Անվտանգություն և կառավարելիություն Առկա է ապարատային մակարդակի անվտանգության մեխանիզմ՝ գաղտնագրման բանալիների անվտանգ պահպանման համար: Աջակցվում է անվտանգ բեռնման (Secure Boot) մեխանիզմ: Աջակցվում է firmware/BIOS մակարդակի պաշտպանություն չարտոնված փոփոխություններից: Ապահովվում է համակարգչի կենտրոնացված կառավարման հնարավորություն՝

						կազմակերպության SS ենթակառուցվածքում կիրառելու համար: Հնարավոր է հեռավար ախտորոշել և կառավարել սարքի հիմնական ապարատային բաղադրիչները՝ համապատասխան կառավարման ենթակառուցվածքի առկայության դեպքում: Սնուցում. Սարքը համալրված է տվյալ կոնֆիգուրացիային համապատասխան գործարանային սնուցման համակարգով: Սնուցման համակարգը ապահովում է սարքի կայուն և անվտանգ աշխատանքը առավելագույն թույլատրելի բեռնվածության պայմաններում: Ապահովում է 100–240 V AC էլեկտրական ցանցերի հետ համատեղելիություն: Ստեղնաշար և մկնիկ . Սարքը համալրված է համապատասխան ստեղնաշարով: Ստեղնաշարը USB է՝ արտադրողի ստանդարտ մատակարարման շրջանակում: Սարքը համալրված է համապատասխան համակարգչային մկնիկով: Մկնիկը USB է՝ արտադրողի ստանդարտ մատակարարման շրջանակում: Իրանը և կառուցվածք .

						Համակարգիչը ունի All-in-One կառուցվածք՝ նվազագույնի հասցնելով առանձին համակարգային բլոկի և մալուխների անհրաժեշտությունը: Էկրանի և համակարգչային հանգույցի գործարանային ինտեգրված են: Ապահովում է աշխատասեղանի վրա կայուն տեղադրում: Ապահովվում է հիմնական բաղադրիչների սպասարկման և/կամ փոխարինման հնարավորություն՝ սարքի կառուցվածքին համապատասխան: Երաշխիք և համապատասխանություն. Երաշխիքային սպասարկման ժամկետ՝ 1 տարի: Սարքը նոր է և չօգտագործված: Սարքը համապատասխանում է տվյալ տեսակի սարքավորումների համար կիրառելի անվտանգության և էլեկտրամագնիսական համատեղելիության պահանջներին: Կտրամադրվի սարքի սերիական համարը և երաշխիքային փաստաթղթերը: Սարքավորումը կմատակարարվի գործարանային ամբողջական կոմպլեկտավորմամբ:

					Երկու արտոնագրված սերվիս-կենտրոնների առկայություն ՀՀ տարածքում, որոնց տվյալները ներկայացված են արտադրողի պաշտոնական Վեբ կայքում, հետևյալ հղումներով՝ https://support.hp.com/us-en/help/service-center : Արտադրողի կողմից նամակ հավաստագիրը (MAF) տրամադրված է: